

## Տ. ԳԵՎՈՐԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ԲԱՐՍԵՂՅԱՆ

(ավազանի անունը՝ Հակոբ)

Ծնվել է 1974 թ. Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղում:

1981-1991 թթ. սովորել է տեղի Ստեփան Շահումյանի անվան միջնակարգ դպրոցում:

1991-1995 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարանում:

1996-1998 թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում որպես հոգևոր սպասավոր:

1999-2003 թթ. ծառայել է Արծվանիստի Վանևան եկեղեցում:

2003-2005 թթ. սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանայից պատրաստման լսարանում:

2005 թ. սեպտեմբերի 11-ին՝ Ս. Խաչվերացի տոնին, Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2005 թ. սեպտեմբերի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Գերաշնորհ Տ. Վիգեն եպիսկոպոս Այքազյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա:

Ամուսնացած է, ունի երկու որդի: